

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվետվություն 2018 թ.  
առաջին եռամսյակի համար

Սույն հաշվետվությունն ամփոփում է 2018 թվականի հունվար-մարտ ամիսներին Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները և հիմնական ձեռքբերումները:

## Եռամսյակի հիմնական ձեռքբերումները

1. Շարունակվեցին Արարատյան բակալավրիատի (ԱԲ) հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքները. հավաստագիրը ճանաչող և ընդունող համալսարանների թիվը մեծացավ ևս 10-ով:
2. Վերջնականացվեցին 2018 թ. ԱԲ-ի ավարտական քննական նյութերը:
3. Անցկացվեց վերապատրաստում ԱԲ-ի քննական կենտրոնի մայրենի լեզվի և օտար լեզուների մասնագետների համար. վերապատրաստումն իրականացվեց ԼՀՔ Կրթության ինստիտուտի մասնագետների կողմից:
4. Շարունակվեցին ԱԲ-ի դասագրքերի ստեղծման աշխատանքները:
5. Շարունակվեց ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի 2017-2018 թթ. շրջափուլը:
6. Շարունակվեց ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի 2018-2019 թթ. շրջափուլում մասնակիցների ներգրավումը. ծրագրում ներգրավվելու դիմում-հայտ ներկայացրեց 250-ից ավելի ուսուցիչ-մասնագետ:
7. Շարունակվեց ԱԲ-ի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագրի մշակումը:
8. Անցկացվեց հանդիպում-սեմինար ԱԲ-ի 21 թեկնածու դպրոցների հոգեբանների համար:
9. Մշակվեցին առողջ դպրոցի գաղափարը ներկայացնող և այլ փաստաթղթեր:
10. Հայաստան այցելեց Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի ութ առաջատար մասնագետ:

## Բովանդակություն

Հայկական կրթական լավագույն ավանդների ու ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա ստեղծված և սովորելու մրցունակ համակարգի ձևավորում

Ուսուցիչների զարգացման և հավաստագրման ծրագրի մշակում

Գիտելիքի տարածման և լավագույն փորձի փոխանակման արդյունավետ հարթակի ստեղծում և ներդրում

Հավելվածներ

## Հապավումներ

**ԿԳԱԾ** Կրթության գերազանցության ազգային ծրագիր

**ԱԲ** Արարատյան բակալավրիատ

**ԱԲԲԿ** Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

**ԼՀՔ** Լոնդոնի համալսարանական քոլեջ (University College London)

**ԿԳՆ** Կրթության և գիտության նախարարություն

**ՔԳՄԿ** Թեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոն (Cambridge Assessment International Education, Cambridge University)

**ՄԲ ՃՀԱԳ** Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալություն (UK NARIC)

**ՀԲԸԾ** «Համալսարանների և քոլեջների ընդունելությունների ծառայություն» կազմակերպություն (UCAS), Միացյալ Թագավորության բուհական ընդունելության միասնական համակարգ

## Կրթության գերազանցության ազգային ծրագիրը՝ համառոտ

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը Հայաստանի հանրակրթության որակի բարձրացման և համակարգային բարեփոխումների իրականացման նախաձեռնություն է:

### ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ձևավորել սովորելու միջազգայնորեն ճանաչելի և մրցունակ համակարգ՝ հայկական կրթական լավագույն ավանդների և ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա
- Բացահայտել և խրախուսել լավագույն արդյունքներ դրսևորած ուսուցիչներին, նպաստել նրանց մասնագիտական զարգացմանը, արդյունավետ կերպով օգտագործել ուսուցչական ռեսուրսը և լավագույն մարդկային ռեսուրսն ուղղորդել դեպի դպրոց
- Խթանել դպրոցների ինստիտուցիոնալ զարգացումը

[Իրականացման գործիք](#)՝ «Արարատյան բակալավրիատ» համակարգ

[Նախաձեռնողներ և իրականացնողներ](#)՝ «Այբ» կրթական հիմնադրամ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

[Միջազգային գործընկերներ](#)՝ Զեմբրիջի համալսարանի «Զեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոն և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտ

## Հայկական կրթական լավագույն ավանդների ու ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա ստեղծված և սովորելու մրցունակ համակարգի ձևավորում

2018 թվականի առաջին եռամսյակում կրթության գերազանցության ազգային ծրագրի իրագործման շրջանակում շարունակվել են Արարատյան բակալավրիատի աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքների շարունակում
2. 2018 թ. ԱԲ-ի ավարտական քննական նյութերի վերջնականացում
3. 2019 թ. ԱԲ-ի ավարտական քննաշրջանի քննաթերթիկների կազմման շարունակում
4. Առարկայական քննությունների մշակում և անցկացում ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի 2018-2019 թթ. շրջափուլի համար
5. Ընդունելության քննությունների մշակում Արարատյան բակալավրիատն առաջարկող առաջին կրթօջախի՝ «Այբ» դպրոցի համար
6. Վերապատրաստում Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի մայրենի լեզվի և օտար լեզուների մասնագետների համար
7. ԱԲ-ի դասագրքերի ստեղծման աշխատանքներ

## ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքների շարունակում

ԱԲ-ի միջազգային ճանաչման գործընթացը շարունակական է, և աշխատանքներն իրականացվում են երկու ուղղությամբ՝ անմիջապես համալսարանների հետ և տվյալ երկրում գործող ակադեմիական ճանաչման մարմնի:

Այս եռամսյակում ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքներն ու բանակցությունները տարվել են անմիջապես համալսարանների հետ, մասնավորապես՝ այն համալսարանների, ուր դիմել են Արարատյան բակալավրիատն առաջարկող առաջին կրթօջախի՝ «Այբ» դպրոցի 12-րդ դասարանի աշակերտները: Արդյունքում Արարատյան բակալավրիատի 2018 թ. առաջին եռամսյակում ԱԲ-ն ընդունել են հետևյալ համալսարանները.

1. Լեյդենի համալսարան, Նիդեռլանդներ,
2. Միներվայի արվեստի ակադեմիա, Հանզեի կիրառական գիտությունների համալսարան, Նիդեռլանդներ,

3. Լոնդոնի թագավորական քոլեջ, ՄԹ,
4. Հոնկոնգի տեխնոլոգիական և գիտական համալսարան, Հոնկոնգ,
5. Լոնդոնի համալսարանական քոլեջ, ՄԹ,
6. Շեֆիլդի համալսարան, ՄԹ,
7. Էդինբուրգի համալսարան, ՄԹ,
8. Կոնկորդիայի համալսարան, Կանադա,
9. Լիդսի Բեքթերի համալսարան,
10. Քեմբրիջի համալսարան, ՄԹ:

Արդյունքում ԱԲ-ն ընդունող համալսարանների թիվը, որոնց համար Արարատյան բակալավրիատի քննական արդյունքներն ընդունելության բավարար պայման են, այսօր (2018 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ) հասնում է 36-ի:

Համալսարան	Երկիր
1. Ֆուտհիլ Դե Անգայի քոլեջ	ԱՄՆ
2. Ֆլորիդայի տեխնոլոգիական և գիտական համալսարան	ԱՄՆ
3. Կանզասի պետական համալսարան	ԱՄՆ
4. Լա Վեռնի համալսարան	ԱՄՆ
5. Ռիվերսայդի Կալիֆոռնիայի համալսարան	ԱՄՆ
6. Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարան	ԱՄՆ
7. Վուստերի պոլիտեխնիկական համալսարան	ԱՄՆ
8. Ֆորդհամի համալսարան	ԱՄՆ
9. Վիեննայի Վեբստերի մասնավոր համալսարան	Ավստրիա
10. Վիեննայի համալսարան	Ավստրիա
11. Վիեննայի բժշկական համալսարան	Ավստրիա
12. Տարտուի համալսարան	Էստոնիա
13. Տորոնտոյի համալսարան	Կանադա
14. Կոնկորդիայի համալսարան	Կանադա
15. Հոնկոնգի տեխնոլոգիական և գիտական համալսարան	Հոնկոնգ
16. Նագոյայի համալսարան	Ճապոնիա



17. Աբերիստուկի ի համալսարան	Միացյալ Թագավորություն
18. Անասնաբուժության արքայական քոլեջ	Միացյալ Թագավորություն
19. Մանչեստրի համալսարան	Միացյալ Թագավորություն
20. Մանչեստրի մետրոպոլիտան համալսարան	Միացյալ Թագավորություն
21. Գոլդսմիթի համալսարան	Միացյալ Թագավորություն
22. Լիդսի համալսարան	Միացյալ Թագավորություն
23. Քեմբրիջի համալսարան	Միացյալ Թագավորություն
24. Բաթի համալսարան	Միացյալ Թագավորություն
25. Բրիստոլի համալսարան	Միացյալ Թագավորություն
26. Էկսեթերի համալսարան	Միացյալ Թագավորություն
27. Լոնդոնի թագավորական քոլեջ	Միացյալ Թագավորություն
28. Քենտի համալսարան	Միացյալ Թագավորություն
29. Լիդսի Բեքեթի համալսարան	Միացյալ Թագավորություն
30. Շեֆիլդի համալսարան	Միացյալ Թագավորություն
31. Լոնդոնի համալսարանական քոլեջ	Միացյալ Թագավորություն
32. Ռոտերդամի Էրասմուս համալսարան	Նիդեռլանդներ
33. Ռոտերդամի համալսարանական քոլեջ	Նիդեռլանդներ
34. Լեյդենի համալսարան	Նիդեռլանդներ
35. Միներվայի արվեստի ակադեմիա, Հանզեի կիրառական գիտությունների համալսարան	Նիդեռլանդներ
36. «Կառավարման բարձրագույն ինստիտուտ» միջազգային բիզնես դպրոց	Ֆրանսիա

ԱԲ-ի միջազգային ճանաչման շուրջ աշխատանքները շարունակվում են:

## 2018 թ. ԱԲ-ի ավարտական քննական նյութերի վերջնականացում

Ինչպես նշված է ԿԳԱԾ-ի 2017 թ. չորրորդ եռամսյակի հաշվետվությունում, 2017 թ. հոկտեմբերին ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները փորձարկեցին ԱԲ-ի 2018 թ. քննական նյութերը բոլոր 4 առարկաներից (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա) և կատարեցին դիտարկումներ, որոնց հիման վրա Քեմբրիջի գնահատման և

միջազգային կրթության կենտրոնի համապատասխան մասնագետները կատարեցին անհրաժեշտ փոփոխություններ, իսկ նոյեմբերին տեղի ունեցան այս քննական նյութերի համագործակցանք նվիրված հանդիպումները:

2018 թ. հունվարին շարունակվեցին աշխատանքներն այս նյութերի շուրջ, և արդյունքում հունվարին դրանք սրբագրվեցին, իսկ փետրվարին վերջնականացվեցին և հանձնվեցին տպագրության:

## **2019 թ. ԱԲ-ի ավարտական քննաշրջանի քննաթերթիկների կազմման շարունակում**

2019 թ. ԱԲ-ի ավարտական քննաշրջանի քննաթերթիկների (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա առարկաների համար) կազմման աշխատանքները մեկնարկել էին 2017 թ. և շարունակվել նաև 2018 թ. առաջին եռամսյակում: Այս աշխատանքների շրջանակում հունվարին ամփոփվել են 2019 թ. ԱԲ-ի ավարտական քննաշրջանի քննական նյութերի 1-ին բաղադրիչի հարցերի կազմման աշխատանքները, պատրաստվել են վերջնական տարբերակները, իսկ փետրվարին ամփոփվել են 2-րդ բաղադրիչի հարցերի կազմման աշխատանքները:

Այս քննական նյութերն այնուհետև ուղարկվել են Զեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի մասնագետներին՝ վերանայման նպատակով: Կենտրոնի տրամադրած դիտարկումների հիման վրա ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները մարտին վերանայել և փոփոխել են 2019 թ. ԱԲ-ի ավարտական քննաշրջանի քննությունների 1-ին (ընտրովի պատասխանով հարցեր) և 2-րդ (կառուցվածքավորված հարցեր) բաղադրիչների քննական հարցերը:

## **Առարկայական քննությունների մշակում և անցկացում ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի 2018-2019 թթ. շրջափուլի համար**

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում մասնակիցների ներգրավումը կատարվում է մի քանի փուլով՝ դիմում-հայտի լրացում և ներկայացում, առարկայական թեստավորման հանձնում և հարցազրույցի մասնակցություն:

Ծրագրի շրջանակում նախատեսված առարկայական թեստավորումը մշակվում և անցկացվում է Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի կողմից: 2018 թ. առաջին եռամսյակում, մասնավորապես՝ հունվարին, ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները մշակեցին ծրագրում ներգրավման քննություններ ութ առարկայի համար՝ ֆիզիկա, քիմիա,

կենսաբանություն, մաթեմատիկա, հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն, ռուսաց լեզու և անգլերեն:

Դիմորդների առարկայական թեստավորումն անցկացվեց Երևանում և Վանաձորում կենտրոնացված կարգով (այս մասին ավելի մանրամասն՝ Էջ 16-ում): Անցկացմանը հաջորդող օրերին ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները ստուգեցին աշխատանքները և ամփոփեցին արդյունքները. քննությանը մասնակցած 226 դիմորդից միայն 75-ը հաղթահարեց թեստավորումը:

Քննությունների արդյունքներն ամփոփելուց հետո ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները նաև կազմեցին քննողի զեկույցներ, որոնք տրամադրվել են ԱԲ-ի փորձագետ-վերապատրաստողներին: Այս զեկույցների նպատակն է ցույց տալ փորձագետ-վերապատրաստողներին, թե հատկապես ինչը նրանք պետք է շեշտադրեն վերապատրաստումների ժամանակ: Այս զեկույցներում արտացոլված են այն թեմաները կամ հարցերը, որոնք ամենադժվարն են եղել դիմորդների համար:

Բացի քննողի զեկույցներից՝ մարտի 12-30-ին ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները նաև անցկացրել են բանավոր քննություններ ռուսերենի և անգլերենի այն ուսուցիչ-մասնագետների հետ, որոնք հաղթահարել են առարկայական թեստավորումը: Բանավոր քննությունների արդյունքները ևս ամփոփվել են և ներկայացվել Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման բաժնին:

## **Ընդունելության քննությունների մշակում Արարատյան բակալավրիատն առաջարկող առաջին կրթօջախի՝ «Այբ» դպրոցի համար**

2017 թ. սկսած՝ Արարատյան բակալավրիատն առաջարկող առաջին կրթօջախի՝ «Այբ» ավագ դպրոցի ընդունելության քննությունները մշակում և անցկացնում է Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնը: Այս տարի քննությունները կանցկացվեն 2018 թ. գարնանը:

Այս նպատակով ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները 2018 թ. առաջին եռամսյակում կազմել են «Այբ» ավագ դպրոցի ընդունելության քննություններ հինգ առարկայի համար՝ հայոց լեզու և լեզվամտածողություն, մաթեմատիկա և տրամաբանություն, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն: Բացի դրանից, նաև կազմվել և հասանելի են դարձել ընդունելության գործընթացի ուղեցույցներ և քննական նյութերի լուծված տարբերակներ:

## **Վերապատրաստում Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի մայրենի լեզվի և օտար լեզուների մասնագետների համար**

Մարտի 28-ին Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի մասնագետ, դոկտոր Ջոն Յանդելը Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնում անցկացրեց վերապատրաստում ԱԲ-ի քննական կենտրոնի մայրենի լեզվի և օտար լեզուների մասնագետների համար: Վերապատրաստումն ուղղված էր լեզվի և գրականության գնահատման մոտեցումներին, մասնավորապես, թե ինչպիսի հարցադրումներով են կենտրոնի մասնագետները կազմում քննաթերթիկները, ինչն են ստուգում, ինչպես են ստուգում և այլն:

Նշենք, որ դոկտոր Յանդելը Հայաստանում էր գտնվում մարտի 26-29-ը Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի 2017-2018 թթ. շրջափուլի մասնակիցների հետազոտական աշխատանքների ներկայացման շրջանակում:

## **ԱԲ-ի դասագրքերի ստեղծման աշխատանքներ**

Քեմբրիջի համալսարանի հրատարակչության հետ մեկնարկած համագործակցության շրջանակում շարունակվում է ԱԲ-ի դասագրքերի ստեղծումը քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա առարկաների համար:

Նախատեսվում է, որ դասագրքերը կտպագրվեն և պատրաստ կլինեն 2018 թ. ամռանը:

## **Ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր**

Կրթության գերազանցության ազգային ծրագրի հիմնական նպատակներից են լավագույն արդյունքներ դրսևորած ուսուցիչներին բացահայտելն ու խրախուսելը, նրանց մասնագիտական զարգացմանը նպաստելը, ուսուցչական և լավագույն մարդկային ռեսուրսը դեպի դպրոց ուղղելը:

Այս առումով 2018 թվականի առաջին եռամսյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր. 2017-2018 թթ. շրջափուլի շարունակում.
2. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր. 2018-2019 թթ. շրջափուլի մասնակիցների ներգրավման շարունակում.
3. Աշխատանքներ «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի համագործակցության շրջանակում:

### **Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր. 2017-2018 թթ. շրջափուլ**

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի 2017-2018 թթ. շրջափուլը, որը պաշտոնապես մեկնարկել էր 2017 թ. հուլիսին, 2018 թ. հունվարից մտավ փորձաշրջանի փուլ, երբ մասնակիցները պետք է գործնականորեն կիրառեին շուրջ վեց ամիս տևած դեմառդեմ և առցանց ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները՝ իրականացնելով սեփական դասարանային հետազոտություն:

Հիշեցնենք, որ ծրագրի մեկնարկից մինչև ավարտը բոլոր մասնակիցները հավաքում են թղթապանակ, որի կարևորագույն բաղադրիչը սեփական դասարանային հետազոտությունն է, որը նրանք իրականացնում են փորձաշրջանի փուլում:

Թղթապանակը բոլոր մասնակիցների վերջնական գնահատման և հավաստագրման հիմքն է:

### *Դասալսումներ ՀՀ բոլոր մարզերում և Արցախում*

Հասկանալու համար, թե որքան հմտորեն, արդյունավետորեն ու նպատակային են մասնակիցները կիրառում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև ուղղորդելու նրանց՝ իրենց դասավանդումը կատարելագործելու ուղղությամբ, հունվարի 22-ից փետրվարի 2-ը ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի ավագ փորձագետ-վերապատրաստողները շրջեցին ՀՀ բոլոր մարզերում և Ստեփանակերտում դասալսելու ծրագրում ներգրավված մասնակիցներին<sup>1</sup>:

Դասալսումներն իրականացվել են Վաղարշապատում, Վանաձորում, Արմավիրում, Գյումրիում, Մասիսում, Դիլիջանում, Արարատում, Աշտարակում, Գավառում, Մարտունիում, Վայքում, Սիսիանում, Ստեփանակերտում, Արվյանում, Սևանում, Հրազդանում, Երևանում, Նորապատում, Այնթապում, Մրգավանում, Արարատում, Փ. Վեդիում, Արագածավանում, Դուրսալում, Շահումյանում, Յաղդանում, Կարմիրգյուղում, Գորիսում, Կապանում, Նոյեմբերյանում, Բերդում, Իջևանում և Բերդավանում:

2018 թվականի փետրվար ամսին ամփոփվել է դասալսումների փուլը և կազմվել է համապատասխան հաշվետվություն:

### *Հետազոտական աշխատանքների ներկայացում և առարկայական վերապատրաստումներ*

Մարտի 26-29-ը ծրագրի 2017-2018 թթ. շրջափուլի մասնակիցները ներկայացրին իրենց հետազոտական աշխատանքները, որոնք կատարել էին իրենց դասարաններում գործնականորեն կիրառելով ծրագրի շրջանակում ձեռք բերած նոր գիտելիքները, հմտությունները և դասավանդման մեթոդները:

Ծրագրի մասնակիցների հետազոտական աշխատանքների թեմաները բազմաբնույթ էին՝ «Տարբերակված ուսումնառության ազդեցությունն ընդհանրական և անհատական ուսումնառության արդյունավետության բարձրացման վրա», «Սովորողների մոտիվացիայի բարձրացումը համագործակցային ուսուցման միջոցով», «Ձևավորող գնահատումը՝ սովորողների մոտիվացիան բարձրացնող միջոց» և այլն:

Հանդիպումների ընթացքում հետազոտական աշխատանք է ներկայացրել ծրագրի 103 մասնակիցներից 102-ը<sup>2</sup>: Հետազոտական աշխատանքները ներկայացրած բոլոր

---

<sup>1</sup>Այս դասալսումների ընթացքում դասալսվել է ծրագրի 103 մասնակիցներից 102-ի դասը: Մեկ մասնակցի դեպքում առաջարկվել է դասալսումն անցկացնել առցանց՝ պայմանավորված վերջինիս աշխատանքային գրաֆիկի անհարմար լինելով:

<sup>2</sup>Ծրագրում ներգրավված մասնակիցներից մեկին, վերջինիս կողմից ակադեմիական բարելավարարության խախտման պատճառով, տրվել է ժամանակ՝ նորից կազմելու իր հետազոտական աշխատանքը և այն ներկայացնելու ապրիլի 12-ին՝ հետազոտական աշխատանքների հանձնման վերջնաժամկետին:

մասնակիցներին տրվել է ուղղորդում դրանք լրամշակելու և ամբողջացնելու ուղղությամբ: Հետազոտական աշխատանքների հանձնման վերջնաժամկետն ապրիլի 12-ն է:

Մասնակիցների հետազոտական աշխատանքների ներկայացմանը ներկա լինելու նպատակով մարտի 26-29-ը Հայաստան ժամանեցին Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հինգ առաջատար մասնագետ, որոնցից չորսը, բացի հետազոտական աշխատանքներն ունկնդրելուց, նաև առարկայական վերապատրաստումներ իրականացրին մասնակիցների համար: Այսպիսով՝ մարտի 26-29-ը Հայաստանում էին՝

- **դոկտոր Յացեկ Բրանտը**, որը հետևեց հետազոտական աշխատանքների ներկայացման ողջ գործընթացին՝ գնահատելու ծրագրի առաջընթացն ու արդյունքները, աջակցեց ԱԲ-ի փորձագետ-վերապատրաստողներին՝ հետազոտությունների և թղթապանակի գնահատման գործում, ինչպես նաև անցկացրեց մենտորության հանդիպումներ փորձագետ-վերապատրաստողների հետ՝ որպես վերջիններիս շարունակական զարգացման գործընթացի մաս:
- **դոկտոր Զոն Յանդելը**, որն իրականացրեց առարկայական վերապատրաստում հայոց լեզվի և գրականության ուսուցիչ-մասնագետների համար:
- **Զենի Գոլդինգը**, որն իրականացրեց առարկայական վերապատրաստում մաթեմատիկայի ուսուցիչ-մասնագետների համար:
- **դոկտոր Արթուր Չապմանը**, որն իրականացրեց առարկայական վերապատրաստում պատմության ուսուցիչ-մասնագետների համար, նաև աջակցություն տրամադրեց ԱԲ-ի «պատմություն» առարկայի ծրագրի կազմման և մասնակիցների առարկայական վերապատրաստման գործընթացում:
- **դոկտոր Մարկ Հարդմանը**, որն իրականացրեց առարկայական վերապատրաստում բնագիտական առարկաների ուսուցիչ-մասնագետների համար:

Հետազոտական աշխատանքների ներկայացմանը ներկա գտնվեցին և մասնակիցներին իրենց հարցերն ուղղեցին ՀՀ կրթության և գիտության նախարարության փոխնախարար Դավիթ Սահակյանը, հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության բաժնի պետ Սուսաննա Ազատյանը և աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Լուսինե Գրիգորյանը:

### ***ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը լքած մասնակիցներ. պատճառներ և հիմնավորումներ***

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում ընդգրկվելու հնարավորություն էր ստացել 111 մասնակից, որոնցից 26-ը՝ պայմանական սկզբունքով՝ հարցազրույցի փուլի չափանիշները մասնակի բավարարելու պատճառով:

ինչպես նշված է ԿԳԱԾ-ի 2017 թ. չորրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ծրագրում ներգրավված մասնակիցների թիվը 105-ն էր:

2018 թ. հունվար-մարտ ամիսներին մասնակիցների թիվը նվազել է երկուսով, և այսօր նրանց թիվը հասնում է 103-ի:

Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ երկու մասնակիցների՝ ծրագրին մասնակցությունը չշարունակելու պատճառ-հիմնավորումները:

- Գյումրու Ակադեմիական վարճարանի քիմիայի ուսուցչուհի Մանյա Պետրոսյանը հունվարից ժամանակավորապես դադարեցրել է մասնակցությունը ծրագրին ֆիզարձակուրդում գտնվելու պատճառով: Հիմք ընդունելով մասնակցի դրական մասնակցությունը ծրագրին՝ նրան հնարավորություն է տրվել միանալու ծրագրի 2018-2019 թթ. շրջափուլին՝ առանց նոր դիմում-հայտ ներկայացնելու և ընտրության գործընթացին մասնակցելու, ինչպես նաև՝ վերսկսելու այնտեղից, որտեղից նա դադարեցրել է իր մասնակցությունը:
- Հունվարին Այնթապի Բ. Մարգարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի Վարդենի Տոնիկյանի մասնակցությունը ծրագրին դադարեցվել է՝ հիմք ընդունելով վերջինիս բացակայությունը 1-ին դեմառդեմ հանդիպմանը, 2-րդ դեմառդեմ հանդիպման 4 օրերին և 3-րդ դեմառդեմ հանդիպմանը, ինչը կազմում էր դեմառդեմ հանդիպումների 90%-ը: Մասնակիցը տեղեկացվել է ծրագրին նորից դիմելու հնարավորության մասին, որի դեպքում նա չի մասնակցի առարկայական քննությանը, սակայն պետք է լրացնի ընդունելության նոր դիմում-հայտ:

## **Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր. 2018-2019 թթ. շրջափուլ**

### *Ներկայացված դիմում-հայտերի ամփոփում և առարկայական թեստավորման անցկացում*

2018 թվականի փետրվարի 1-ին ավարտվեց Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի 2018-2019 թթ. շրջափուլի դիմում-հայտերի ընդունման գործընթացը, որը մեկնարկել էր 2017 թ. դեկտեմբերի 13-ին՝ ութ առարկայի համար՝ հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն, անգլերեն և ռուսերեն:

Ծրագրում ներգրավվելու դիմում-հայտը լրացրեց և ներկայացրեց ՀՀ և Արցախի 256 մասնագետ-ուսուցիչ, որոնցից 226-ը, ովքեր բավարարեցին դիմում-հայտով սահմանված պահանջները, հրավիրվեցին առարկայական թեստավորման: Երկու ժամ տևողությամբ



առարկայական թեստավորումն անցկացվեց փետրվարի 18-ին Երևանում և Վանաձորում կենտրոնացված կարգով:

Բոլոր դիմորդները մարտ ամսին ծանուցվեցին առարկայական քննության արդյունքների մասին, իսկ շեմը հաղթահարած դիմորդները՝ թվով 75, տեղեկացվեցին հարցազրույցի մասին, որն անցկացվեց մարտի 12-30-ը:


Ստորև ներկայացված Է առարկայական թեստավորմանը մասնակցած և փուլը հաղթահարած դիմորդների բաշխվածությունն ըստ առարկաների:

**Աղյուսակ 1.** Առարկայական թեստավորման արդյունքներ

Առարկա	Թեստին մասնակցած դիմորդներ	Թեստը հաղթահարած դիմորդներ
Հայոց լեզու և գրականություն	52	9
Հայոց պատմություն	43	12
Անգլերեն	49	15
Ռուսերեն	19	9
Մաթեմատիկա	14	8
Ֆիզիկա	13	8
Քիմիա	17	11
Կենսաբանություն	19	3
<b>Ընդամենը</b>	<b>226</b>	<b>75</b>

Ստորև ներկայացված է առարկայական թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների տոկոսային բաշխվածությունն ըստ առարկաների:

**Պատկեր 1:** Առարկայական թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների տոկոսային բաշխվածություն



Առարկայական քննության համար սահմանված շեմը չհաղթահարած մասնակիցներից 26-ը դիմել է իրենց աշխատանքի վերանայման և միավորների վերահաշվարկի համար: Արդյունքում վերանայման դիմած մասնակիցներից միայն մեկն է ստացել հնարավորություն՝ մասնակցելու հարցազրույցի փուլին:

*Հարցազրույցների անցկացում 75 դիմորդի հետ*

Հարցազրույցների փուլն անցկացվել է մարտի 12-ից 30-ը: Հարցազրույցների նպատակն էր բացահայտել դիմորդների՝ ծրագրին մասնակցելու շարժառիթները, դասավանդման առանցքային սկզբունքները, հաղորդակցվելու հմտությունները և անձնային որակները, սեփական փորձառությունը գնահատելու ու կատարելագործելու, ինչպես նաև մարտահրավերներն ընդունելու, դժվարություններին դիմակայելու և հաջողություններին հասնելու պատրաստակամությունը:

Հարցազրույցները վարել են ԱԲ-ի փորձագետ-վերապատրաստողները: Միայն «անգլերեն» և «ռուսերեն» առարկաների դեպքում հարցազրույցների շրջանակում անցկացվել է նաև 10 րոպեանոց զրույց՝ անգլերենի և ռուսերենի խոսակցական հմտությունները դիտարկելու համար: Հարցազրույցների փուլի ամփոփման ընթացքում անգլերենով և ռուսերենով անցկացված զրույցների արդյունքները համադրվելու են առարկայական քննության և ընդհանուր հարցազրույցի արդյունքների հետ:

Հարցազրույցների փուլը կամփոփվի ապրիլի առաջին կեսին, այս փուլը հաջողությամբ հաղթահարած մասնակիցները կտեղեկացվեն ծրագրում ներգրավվելու/չներգրավվելու որոշման մասին ապրիլի 20-ին:

## **Աշխատանքներ «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի համագործակցության շրջանակում**

«Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի միջև նոյեմբերին մեկնարկած համագործակցության շրջանակում նախատեսվում է իրականացնել անգլերենի առցանց դասընթացներ Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի այն մասնակիցների համար, ովքեր բնակվում են ՀՀ մարզերում: Այս դասընթացներում ներգրավվելու ցանկություն է հայտնել ծրագրի 33 մասնակից: Անգլերենի նրանց առցանց ուսումնառությունը մեկնարկեց 2018 թ. ծմռանը և կշարունակվի մինչև ս. թ. ամռան վերջ:

Անգլերենի դասընթացները կազմակերպում են «Հայաստանի մանուկներ» հիմնադրամն ու ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը:

## Գիտելիքի տարածման և լավագույն փորձի փոխանակման արդյունավետ հարթակի ստեղծում և ներդրում

2018 թվականի առաջին եռամսյակում շարունակվել են ԱԲ-ի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագրի մշակման աշխատանքները, ինչպես նաև քննարկվել է նոր դպրոցների ընդգրկումը ծրագրի թեկնածության փուլում:

Իրականացված հիմնական աշխատանքները ներառում են՝

- ԱԲ-ի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագրի մշակման շարունակում.
- «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի համագործակցության շրջանակում ԱԲ-ի 21 թեկնածու դպրոցների հոգեբանների համար հանդիպում-սեմինարի անցկացում.
- ԱԲ-ի դպրոցների թեկնածության փուլում նոր դպրոցների ընդգրկման շուրջ քննարկում.
- առողջ դպրոցի գաղափարը ներկայացնող և այլ փաստաթղթերի մշակում:

## Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագիր

Կարևորելով ղեկավար կազմի, մասնավորապես՝ դպրոցի տնօրենի դերը դպրոցների վերափոխման ու կայացման, ինչպես նաև աշակերտների արդյունքների բարելավման գործում 2017 թ. ամռանը «Այբ» կրթական հիմնադրամը, Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի հետ համագործակցությամբ, սկսեց Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցների ղեկավար կազմի (տնօրենների և փոխտնօրենների) մասնագիտական զարգացման ծրագրի մշակումը:

Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը մինչև 1 տարի տևողությամբ անվճար տեսական և գործնական դասընթացների շարք է, որի նպատակը տնօրենների և փոխտնօրենների գիտելիքների, հմտությունների և ունակությունների զարգացումն ու 21-րդ դարի դպրոցների կառավարման մոտեցումների մատուցումն է:

Ծրագրի մշակման շրջանակում 2017 թ. հունիսին, հոկտեմբերին և նոյեմբերին Հայաստան էին այցելել ԼՀՔ Կրթության ինստիտուտի տնօրենների զարգացման և առաջնորդության

գծով առաջատար մասնագետներ, որոնք Արարատյան բակալավրիատի դպրոցների զարգացման և համակարգման բաժնի թիմի և ԱԲ-ի թեկնածու դպրոցների տնօրենների հետ շուրջ յոթ ամիս շարունակվող քննարկումների արդյունքում դուրս են բերել դպրոցների ղեկավար կազմի դերը, աշխատանքների ոլորտները և դրանց զարգացման կարիքները:

2018 թ. առաջին եռամսյակում շարունակվել են ծրագրի մշակման աշխատանքները, և դրանց շրջանակում Արարատյան բակալավրիատի դպրոցների զարգացման և համակարգման բաժնի թիմը հունվարի 21-27-ը մեկնեց Մեծ Բրիտանիա, որտեղ հունվարի 22-23-ին հանդիպումներ ունեցավ ԼՀԶ Կրթության ինստիտուտի տնօրենների զարգացման գծով մասնագետների հետ:

ԼՀԶ-ի փորձագետները ներկայացրին դպրոցների գործունեության, ուսումնական գործընթացների, դասավանդման տեխնիկաների վերլուծության և գնահատման, դպրոցների մշտադիտարկման և դրանց զարգացումը խթանող բնութագրական արձագանք տրամադրելու մեթոդների իրենց փորձը:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին և հստակեցվեցին ծրագրի բովանդակությունը, նպատակներն ու ղեկավար կազմի զարգացման ուղղությունները, որոնք հիմնականում վերաբերում են դպրոցի բարելավմանն ուղղված տեսլականի և ռազմավարության մշակմանը, համակարգային փոփոխությունների կառավարմանը, ծնողների և համայնքի հետ համագործակցության ծավալմանը, թիմերի առաջնորդմանը, արդյունավետ հաղորդակցության վարմանը, ինքնազարգացմանը և այլն: Նաև ամփոփվեցին վերապատրաստման ծրագրի մեկնարկը և ծրագրի սահուն ընթացքն ապահովելու նպատակով նախատեսված տեխնիկական միջոցների, ռեսուրսների և մասնակիցների արդյունավետ բաշխման տարբերակները:

Տեղի ունեցած քննարկումների հիման վրա թիմն այնուհետև շուրջ 1,5 ամիս լրամշակեց ծրագիրը, և արդեն մարտին մեկնարկեցին վերջնականացման աշխատանքները: Այս նպատակով մարտի 20-22-ը Հայաստան այցելեցին ԼՀԶ Կրթության ինստիտուտի առաջնորդության գծով մասնագետներ Էնթոնի Ռիչարդսոնը, Քարեն Սպենս-Թոմասը և Վանդա Թիլոթսոնը:

Եռօրյա հագեցած այցի ընթացքում նրանք հանդիպումներ ունեցան «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Սոնա Կոշեցյանի, Կրթության գերազանցության ազգային ծրագրի տնօրեն Տ. Մեսրոպ քին. Արամյանի և Արարատյան բակալավրիատն առաջարկող առաջին կրթօջախի՝ «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանի հետ:

Հանդիպման նպատակը ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագրի բաղադրիչները, ոլորտները, մասնակիցների գնահատման մեթոդներն ու գործիքները քննարկելն ու ամբողջացնելն էր: ԼՀԶ Կրթության ինստիտուտի մասնագետները հանդիպում-

քննարկումներ ունեցան նաև ծրագրի հայաստանյան վերապատրաստողների հետ, ովքեր այս փուլում կօժանդակեն ԼՀՔ-ի մասնագետներին ծրագիրն իրականացնելիս:

Հայաստանում գտնվելու օրերին մասնագետները հանդիպում ունեցան նաև Արարատյան բակալավրիատի մի քանի թեկնածու դպրոցների տնօրենների հետ՝ զրուցելու և անձամբ ծանոթանալու հայաստանյան պետական դպրոցների համատեքստին ու առանձնահատուկություններին:

Ծրագրի մշակումը կավարտվի ապրիլի 10-ին: Այն պաշտոնապես կմեկնարկի Երևանում մայիսի 11-ին և անվճար կլինի բոլոր մասնակիցների՝ Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցների տնօրենների և փոխտնօրենների համար: Ծրագրի շրջանակում նախատեսվող դեմառդեմ հանդիպումները կվարեն ԼՀՔ Կրթության ինստիտուտի առաջնորդության գծով մասնագետներ Քարեն Սպենս-Թոմասը և Վանդա Թիլոթսոնը՝ հայաստանյան վերապատրաստողների օժանդակությամբ:

**Նշում:** Հունվարի 21-29-ը Մեծ Բրիտանիա կատարած այցի ընթացքում ԱԲ-ի դպրոցների զարգացման և համակարգման բաժնի թիմը նաև իրականացրեց հետևյալ գործողությունները:

- Հունվարի 22-ին ԱԲ-ի դպրոցների զարգացման և համակարգման բաժնի թիմը Վեստմինստերի դպրոցի տնօրեն Փատրիկ Դերհամի հրավերով այցելեց Վեստմինստերի դպրոց: Այցի ընթացքում թիմի անդամները շրջայց կատարեցին դպրոցում, այնուհետև զրույց ունեցան պրն Դերհամի հետ՝ քննարկելով մի շարք հարցեր, որոնք առնչվում էին դպրոցի կառավարմանը, դպրոցի խորհուրդների կառուցվածքին և գործունեությանը, աշակերտների, ծնողների և դպրոցի տնօրենի փոխհարաբերություններին, ինչպես նաև համայնքի աշխատանքներում և եկեղեցական միջոցառումներում աշակերտների ներգրավվածությանը:
- Հունվարի 23-ին ԱԲ-ի դպրոցների զարգացման և համակարգման բաժնի թիմը մասնակցեց «Հաշվետվողականություն և անհավասարություն» խորագրով սեմինարին, որտեղ իրենց փորձառությունն ու կատարված հետազոտություններն էին ներկայացնում Ամստերդամի համալսարանի պրոֆեսոր Հերման վան դե Վերֆհորսթը և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ներկայացուցիչներ (OECD) Դանիել Սալինասը և Ռոդրիգո Տորրեսը:

- Հունվարի 24-ին ԱԲ-ի դպրոցների զարգացման և համակարգման թիմը ներկա գտնվեց BETT SHOW 2018 միջազգային կրթական ֆորումին՝ մասնակցելով տարբեր կազմակերպությունների տաղավարներում կազմակերպված փոխգործուն սեմինարներին:
- Հունվարի 26-ին ԱԲ-ի դպրոցների զարգացման և համակարգման բաժնի թիմը, ԼՀԶ-ի միջնորդությամբ, շրջայց կատարեց Լոնդոն քաղաքի տղաների դպրոցում, որից հետո հանդիպեց դպրոցի ներկայացուցչի հետ, որը ներկայացրեց իրենց դպրոցների ցանցին պատկանող դպրոցների կառուցվածքի, ղեկավարման և ֆինանսավորման մոտեցումների առանձնահատկություններն ու տարբերությունները, ծնողների, աշակերտների և դպրոցի անձնակազմի փոխհարաբերությունները, դպրոց-համայնք կապը, դպրոցի ընդունելության գործընթացը, աշակերտներին ընձեռվող հնարավորությունները և ուսանելու առավելությունները:

## Աշխատանքներ՝ իրականացված «Այբ» հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի համագործակցության շրջանակում

2017 թ. նոյեմբերին 23-ին «Այբ» կրթական հիմնադրամը և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որով երկու կառույցները սկսեցին համագործակցություն, մասնավորապես՝ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայալեզու և միջազգայնորեն ճանաչված ծրագրի և շահառու համայնքներում «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմից իրականացվող կրթական ծրագրերի շրջանակում:

Վերոնշյալ համագործակցության շրջանակում 2018 թ. առաջին եռամսյակում իրականացված աշխատանքները վերաբերում էին հետևյալին:

- *Հանդիպում-սեմինար Արարատյան բակալավրիատի 21 թեկնածու դպրոցների հոգեբանների համար՝ ուղղված դպրոցում հոգեբանների դերի բարձրացմանը*

Փետրվարի 27-ին Երևանում անցկացվեց հանդիպում-սեմինար՝ ուղղված դպրոցում հոգեբանի դերի բարձրացմանն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին: Այն վարեցին «Այբ» դպրոցի, «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հոգեբաններն ու մասնագիտական կողմնորոշման գծով մասնագետները:

Հանդիպում-սեմինարին մասնակցեց ԱԲ-ի 21 թեկնածու դպրոցներից մոտ 40 մասնակից՝ դպրոցի տնօրեններ, մասնագիտացված կրթական աջակցության գծով փոխտնօրեններ, հոգեբաններ և ուսուցիչներ:

Հանդիպման առաջին հատվածում ներկայացվեցին դպրոցում հոգեբանի դերն ու գործառնությունները: Հանդիպումը վարող հոգեբանները խոսեցին դպրոցում հոգեբանի գործունեության հիմնական նպատակների, ուղղությունների, ինչպես նաև տարբեր տարիքի աշակերտների, նրանց ծնողների և ուսուցիչների հետ աշխատանքի իրենց փորձի ու դպրոցի հոգեբանի դերի բարձրացմանն ուղղված աշխատանքների մասին:

Հանդիպման երկրորդ հատվածում երկու հիմնադրամների մասնագետները ներկայացրին մասնագիտական կողմնորոշման աշխատանքները դպրոցում, մանրամասնեցին ավագ դպրոցի աշակերտների հետ աշխատանքի ուղղություններն ու մասնակիցներին հաղորդակից դարձրին իրենց փորձին:

Երկու հիմնադրամների գործակցությունն այս թեմաների շուրջ շարունակական բնույթ կկրի, և ապրիլին կանցկացվեն գործնական հանդիպումներ հոգեբանների հետ:

- *Առողջ դպրոցի գաղափարը ներկայացնող փաստաթղթի մշակում*

Աշակերտների մեջ առողջ կենսակերպի մշակույթ սերմանելու և այդ գործում դպրոցի կարևորությունը ներկայացնելու նպատակով «Այբ» կրթական հիմնադրամը և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը 2017 թ. դեկտեմբերին սկսեցին առողջ դպրոցի գաղափարը ներկայացնող փաստաթղթի մշակումը, որի աշխատանքներն ավարտվեցին 2018 թ. մարտին:

Փաստաթուղթը շեշտադրում է առողջ դպրոցի 4 հիմնական ոլորտները, որոնք են ապահով և անվտանգ ֆիզիկական միջավայրը, առողջ սնունդը, ֆիզիկական ակտիվության խթանումը և հոգեբանական-սոցիալական բարենպաստ մթնոլորտի ապահովումը:

Փաստաթուղթը կուղարկվի Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցներին ս. թ. գարնանը:

## **Նոր դպրոցների ընդգրկում ԱԲ-ի թեկնածուության փուլում**

Ինչպես նշված է ԿԳԱԾ-ի 2017 թ. առաջին եռամսյակի հաշվետվության մեջ, Արարատյան բակալավրիատին ՀՀ մարզերի և Ստեփանակերտի դպրոցների միանալու գործընթացը մեկնարկել է 2016 թվականին:

Ծրագրին միանալու դիմում-հայտ էր ներկայացրել ՀՀ մարզերի և Ստեփանակերտի՝ ավագ բաղադրիչ ունեցող 55 դպրոց (այս դպրոցներից 54-ը գտնվում է ՀՀ մարզերում, իսկ մեկը՝ Ստեփանակերտում), որոնք բաժանվել էին ըստ թեկնածուության փուլի մեկնարկային տարվա:



Դիմում-հայտերի քննման արդյունքում առաջին փուլ անցած 27 դպրոցներից 21-ը 2017 թվականի գարնանը ներառվեց թեկնածության փուլում: Մյուս վեց դպրոցներից երեքին առաջարկվել են համագործակցության այլ ուղիներ, իսկ մյուս երեքը, ըստ 2017 թ. կանխատեսումների, կարող էին ներառվել թեկնածության փուլում 2018 թվականից սկսած:

Բացի վերոնշյալ երեք դպրոցից՝ դիմում-հայտերի ուսումնասիրության հիման վրա առանձնացվել էր ևս 13 դպրոց՝ դիմած 55-ից, որոնք կարող էին ներգրավվել ԱԲ-ի դպրոցների թեկնածության փուլում 2018 թվականից սկսած:

2018 թ. առաջին եռամսյակում Արարատյան բակալավրիատի դպրոցների ընտրության հանձնաժողովին են ներկայացվել այդ 16 դպրոցների մասին ամփոփ հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել են այս դպրոցների թեկնածության փուլի մեկնարկի նոր կանխատեսումներ և ճշգրտումներ: Առաջիկայում նախատեսվում են այս դպրոցների տնօրենների հետ հարցազրույցներ, որից հետո արդեն կհստակեցվեն և կիրառարակվեն այդ դպրոցների՝ ԱԲ-ի թեկնածության փուլում մեկնարկի տարիները:

## **2018 թ. առաջին եռամսյակում մշակված կամ ավարտին հասցված փաստաթղթեր**

2018 թ. առաջին եռամսյակում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները:

- Հունվարին ավարտվել է ԱԲ-ի թեկնածու դպրոցների համար նախատեսված փաստաթղթի նախնական տարբերակի մշակումը: Նրանում ներառված են ինչպես ԱԲ ծրագրի ստանդարտները, այնպես էլ 2018 թ. ԱԲ ծրագրի ներդրմանն առնչվող առանձնահատկությունները և սկզբունքները:
- Փետրվարին մշակվել և ԱԲ-ի թեկնածու դպրոցներին է տրամադրվել ամբողջական տեղեկույթ 2018 թ.-ի ԱԲ-ի հոսք աշակերտների ընտրության գործընթացի ու սկզբունքների վերաբերյալ: Բացի դրանից, թեկնածու դպրոցներին նաև տրամադրվել է ուղղորդում աշակերտների ներգրավման ուղղությամբ: Վերջնականացվել և դպրոցներին տրամադրվել են ԱԲ-ի ստանդարտների փաստաթուղթն ու ծնողներին և աշակերտներին ներկայացնելու համար նախատեսված, ԱԲ ծրագիրը ներկայացնող պրեզենտացիան: